



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՕՄ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Ուրբաթ, 25 Սեպտեմբերի կեսօրե առաջ ժամը 11ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանին մեջ ընդունեց այցելութիւնը ՀՕՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներու, որոնց հետ խորհրդակցեցաւ ՀՕՄի գործունեութեան ու մեր ժողովուրդը յուզող այժմեական հարցերու շուրջ:

ՀՕՄի ներկայացուցիչները շնորհակալութեան խօսք ուղղեցին Առաջնորդ Սրբազանին, որ յարատւօրէն զօրավիգ կը կանգնի կնոջական այս կազմակերպութեան գործունեութեան ու ձեռնարկներուն, անձամբ ներկայ ըլլալով հանգրուանային ժողովներու եւ հանդիսութեանց: Անոնք այս առիթով տեղեկութիւններ փոխանցեցին ՀՕՄի 100ամեակին նուիրուած աշխատանքներուն մասին, որոնք իրենց գազաթնակետին պիտի հասնին յառաջիկայ տարի, 2010ին, միութեան 100րդ տարեդարձին: Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց ՀՕՄի գործունեութիւնն ու ՀՕՄականներու նուիրումը, որոնք կը տարածուին հայկական գաղութներու վրայ եւ կ'ընդգրկեն Հայաստանը, Արցախն ու Ջաւախքը:

Խորհրդակցութեան նիւթ եղաւ նաեւ Հայաստան-Թուրքիա յարաբերութեանց բնականոնացման գործընթացը: Առաջնորդ Սրբազանն ու հիւր ներկայացուցիչները վեր առին այն կետը, որ բարեկամութեան էջին բացումը ցանկալի է, սակայն այդ քայլը պէտք է շրջանցէ ու արհամարիէ Հայաստանի, Արցախի իրաւունքերն ու Յեղասպանութենէն բխող մեր Դատին պահանջատիրութիւնը: Անոնք յոյս յայտնեցին, որ հայրենի իշխանութիւնները անսան հայութեան համատարած սպասումներուն:

### PRELATE MEETS WITH A.R.S. REGIONAL EXECUTIVE REPRESENTATIVES

On the morning of Friday, September 25<sup>th</sup>, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Relief Society Regional Executive.

The representatives first and foremost thanked the Prelate for his continuous support of their endeavors and his active participation in the

organization's meetings and functions. The guests also briefed the Prelate on preparations for the centennial, which will be celebrated in 2010.

The Prelate and guests also discussed the recent developments between Armenia and Turkey, agreeing that normalization of relations cannot come at the cost of Armenia's rights and expressing hope that the Armenian government will consider the appeals of Armenians worldwide.